ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԿ ԴՌՆԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ

ՄՈՍԿՎԱ, 28 նոյեմբերի։ Արմենպրեսի հատուկ թղթակիցներ Լ. Ազրոյանը և Ջ. Բալագյոզյանը հաղորդում են.

Երկու օր առաջ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պալատների նիստերի դահլիճում քննարկվեց և առաջին ընթերցմամբ ընդունվեց մամուլի և մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցների մասին ԽՍՀՄ օրենքի նախագիծը, որտեղ, բառացիորեն առաջին իսկ տողերից, հաստատվում է ինֆորմացիա ստանալու ժուռնալիստի իրավունքը։ Իսկ այսօր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում հավատարմագրված բոլոր ժուռնալիստներին առավոտյան կարճատև նիստից հետո խնդրեցին հեռանալ մամուլի օթյակից։ Անջատվեցին նաև մամուլի կենտրոնի էկրանները, որտեղից կարելի էր հետևել Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքի ընթացքին։ Այսպես հրապարակայնությունը հատնվեց փակ դռների հետևում, երբ քննարկման համար պառլամենտականների ուշադրությանը վերջապես առաջարկվեցին ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմները։ Վերջապես ենք ասում այն պատճառով, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմով զբաղվող հանձնաժողովի զեկուցումը միայն, որն ստեղծվել էր դեռևս ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարում, բազմիցս տեղափոխվել է նստաշրջանի աշխատանքի գրաֆիկում։ Կես ժամ էլ չէր անցել, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ճեմասրահում երևաց Լեռնային Ղարաբաղի հայ պատգամավորությունը, որը հեռացել էր նիստերի դահլիճից։

Արմենպրեսի թղթակիցների հետ կարճատև հարցազրույցում ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Ջ. Բալայանն ասաց. Մենք հնարավոր չհամարեցինք շարունակելու Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի քննարկումը, քանի որ այն նախ կրում է հապշտապ բնույթ, ընդ որում պետության ղեկավարի բացակայությամբ, որը գրեթե երկու ամիս շարունակ անմիջական մասնակցություն է ցուցաբերել ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծումների որոնման գործին, երկրորդ՝ քննարկումը կատարվում է այն ժամանակ, երբ սրվել է Արցախի պաշարումն ու վերսկսվել Հայաստանի շրջափակումը։

Այս պայմաններում անհնար ենք համարում դարաբաղյան պրոբլեմի լուծման նոր նախագիծ ընդունելը, թեկուզև արդեն այն պատճառով, որ նրա առաջին կետը, որն, ի դեպ, Ադրբեջանի Գերագույն խորհրդին կոչ է անում ընդունել «ԼՂԻՄ-ի իրավունքների ու երաշխիքների մասին» դեկլարացիան, կոպտորեն ոտնահարվում է։ Ուստի մենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի նախագահությանը խնդրում ենք օրակարգից հանել դարաբաղյան հարցի քննարկումը մինչև հնարավոր կլինի հանգիստ և գործարար մթնոլորտում գտնել իսկապես փոխզիջողական և գործարար լուծում։

Վերջին շրջանում, ասես կանխազգալով ԼՂԻՄ-ի պրոբլեմի և ռեգիոնի իրադրության հապճեպ, աշնանային նստաշրջանի աշխատանքի բառացիորեն եզրափակիչ օրը գցված քննարկումը, Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի պատգամավորությունները գրավոր հայտարարություններ էին հղում երկրի ղեկավարության հասցեին։ Այսպես, երեկ՝ նոյեմբերի 27-ին, առավոտյան նիստում նախագահող Մ. Ս. Գորբաչովին հանձնվեց հայկական երկու պատգամավորությունների հայտարարությունը, որտեղ մասնավորապես հաղորդվում էր, որ ԼՂԻՄ-ում և նրա շուրջը լարվածությունը վերջին ժամանակներս չափազանց սրվել է, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին կանգնեցրել ազգամիջյան պատերազմի եզրին։ Ոտնահարվում են բոլոր համամարդկային արժեքները՝ խաղաղությունը, անվտանգությունը, ազատությունը, Ղարաբաղի ժողովրդին հնարավորություն չի տրվում վճռելու իր բախտը։

Հայտարարության մեջ հիշեցվում էր, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների դեռևս առաջին համագումարը հանձնարարեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի քաղաքական լուծման ուղիների որոշման համար ստեղծել ԼՂԻՄ-ի պրոբլեմներն ուսումնասիրող հանձնաժողով։ Անցել է մոտ կես տարի, որը լիովին բավարար էր պրոբլեմի համակողմանի ուսումնասիրման և իրագործելի առաջարկությունների մշակման համար։ Սակայն արտաքին ճնշմամբ, հանձնաժողովի եզրակացությունը արմատական փոփոխությունների է ենթարկվել։ Այդուամենայնիվ նրա առաջարկություններում մնացել են ընդունելի, փոխզիջողական գաղափարներ, որոնք կարող էին լուծել ռեգիոնում ստեղծված պայթյունվալի իրավիճակը։

Սակայն նոյեմբերի 25-ին ԼՂԻՄ-ի դեպուտատներին առաջարկվեց առաջարկությունների մի ծրար, որը բացահայտորեն անընդունելի էր հայ ժողովրդի շահերի տեսակետից։ Այդ «նոր» առաջարկությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ակնհայտ կապիտուլացում Ադրբեջանի ժողովրդական ճակատի ծայրահեղականների առջև, որն ամեն անգամ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելուց առաջ ուժային ճնշում է գործադրում ինչպես Հայկական ԽՍՀ-ի վրա, օրինակ՝ շրջափակումը, այնպես էլ երկրի կենտրոնական մարմինների վրա՝ զանգվածային անկարգությունների, գործադուլների և այլ հակաիրավական գործողությունների ձևով։

Հայ դեպուտատները մերժում են բիրտ ուժի ու սպառնալիքի դիրքից թելադրանքի ամեն մի փորձ։

Նիստերի դահլիճից ԼՂԻՄ-ի հայկական պատգամավորության դուրս գալուց հետո ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը շարունակեց աշխատանքը։ Հանդես եկան ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանը, ժողովրդական դեպուտատներ Գ. Ա. Գալոյանը, Գ. Ա. Ենոքյանը, Ս. Ն. Խանզադյանը, Ս. Ա. Համբարձումյանը։ Նրանք առաջարկում էին դարաբաղյան պրոբլեմի փոխզիջողական լուծում, հիմնավորում իրենց դիրքորոշումը, սակայն նստաշրջանը ձեռնամուխ եղավ ԼՂԻՄ-ի վերաբերյալ Գերագույն խորհրդի առաջարկությունների նոր ծրարի քվեարկությանը։ Անհամաձայնություն արտահայտելով այդ որոշման նկատմամբ, Հայկական ԽՍՀ դեպուտատները լրիվ կազմով հեռացան նիստերի դահլիճից։